ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N << ԵՔ-ԲՄԾՁԲ-18/53-2>>

ք. Երևան 16 մարտի 2018թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Գ. Չթրյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 01.04.2015 թվականի թիվ 956-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և Վահրամ Կնյազյան Ա/Ձ-ն ի դեմս Վահրամ Կնյազյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Երևան քաղաքի վարչական շրջանների բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Կապալի օբյեկտի և դրա առանձին մասերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող պահանջները ներկայացված են նախագծանախահաշվային փաստաթղթերում:

2.4.5 Եթե սույն պայմանագրի 2.4.4 կետով սահմանված ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կատարողը սույն պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու

կամ ոչ պատշաճ կատարելու համար Պատվիրատուին վճարում է տուգանք՝ հայտնաբերված թերության վերացման համար կապալառուի կամ Պատվիրատուի կողմից իրականացված փաստացի ծախսերի չափով:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **տասնհինգ** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է **193 900 (Մեկ հարյուր իննսուներեք հազար ինը հարյուր) ՀՀ դրամ:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ,

որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **16** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Սույն պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչությունը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Երևանի քաղաքապետարան	Վահրամ Կնյազյան Ա/Ձ
ք. Երևան, Արգիշտի փող. 1	ՀՀ Շիրակի մարզ, ք. Արթիկ,
Կենտրոնական գանձապետարան	Բաղրամյան փող., 1 շ., բն. 2
	«ՎՏԲ Հայաստան Բանկ» ՓԲԸ, 10 մ/ճ
ՀՎՀՀ 02593108	Հ/Հ 16067009230500
	ՀՎՀՀ 61718934
Գ. Չթրյան ----------	Վ. Կնյազյան ----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 1
16 մարտի 2018թ.կնքված N ԵՔ-ԲՄԾՁԲ-18/53-2
ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Երևան քաղաքի վարչական շրջանների բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական ծառայությունների մատուցման

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված հ/հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը*
2	71351540/643	1. Տեխնիկական հսկողությունը պետք է իրականացվի պատվիրատուի կողմից տրամադրվող նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա և պետք է ապահովի վերանորոգման աշխատանքների իրականացումը անհրաժեշտ որակով և ինժեներական նախագծերին, տեխնիկական առանձնահատկություններին և այլ պայմանագրային փաստաթղթերին համապատասխան: 2. Տեխնիկական հսկողության ծառայությունները պետք է իրականացվեն Պատվիրատուի կողմից տրամադրվող պարտականությունների շրջանակներում: 3. Տեխնիկական հսկողություն իրականացնողի հիմնական պարտականություններն են՝ • շինարարության սկզբից մինչև ավարտը ընկած ժամանակահատվածում պարբերաբար լուսանկարահանել շինարարության օբյեկտի վիճակը, • ապահովել կատարվող աշխատանքների համապատասխանությունը վերանորոգման նորմերին և կանոններին	դրամ	29000	1	**Աջափնյակ վարչական շրջան** /Հալաբյան 24$_2$, Աբելյան 17$_2$, Բաշինջաղյան 188$_2$, Մարգարյան 2-րդ նրբ. 10$_2$, Մարգարյան 2-րդ նրբ. 14$_2$, Ֆուչիկի 7/5$_2$, Սիսակյան 18ա $_2$, Սիսակյան 18բ $_2$, Մարգարյան 2-րդ նրբ. 12ա $_2$, Մարգարյան 2-րդ նրբ. 12$_2$, Շինարարների 15/2 $_2$, Շիրազի 26$_2$, Շիրազի 40$_2$, Բաշինջաղյան 2-րդ նրբ. 1$_2$, Նորաշեն 37$_2$, Բաշինջաղյան 196$_2$, Ֆուչիկի 19$_2$, Հալաբյան 34ա $_2$, Արզումանյան 32$_2$, Արզումանյան 24$_2$, Շինարարների 10/1$_2$, Լենինգրադյան 52$_2$, Հալաբյան 9/1$_2$, 16թաղ. 26$_2$, 16թաղ. 25$_2$, 16թաղ. 33$_2$, 16թաղ.23$_2$, 16թաղ.31$_2$, 16թաղ. 15$_2$, 16թաղ. 14$_2$, 16թաղ. 20$_2$, 16թաղ. 16$_2$, 16թաղ. 17$_2$, 16թաղ. 21$_2$, 16թաղ. 44$_2$, 16թաղ. 46$_2$, 16թաղ. 47$_2$,	Շինարարական աշխատանքների կատարման ավարտ

						Մազմանյան 52 հասցեներ/	
3	71351540/656	• Կապալառուի կողմից պայմանագրային պարտավորությունների կատարման շեղում հայտնաբերելուց անհապաղ տեղեկացնել Պատվիրատուին՝ կցելով համապատասխան հիմնավորումը, • ստուգել և հաստատել բանվորական գծագրերը՝ նախապատրաստված Կապալառուի կողմից, • ստուգել և վերահսկել նյութերի որակը և շինարարական աշխատանքների ընթացքը, որպեսզի ապահովվի սպեցիֆիկացիաներում և պայմանագրային մյուս փաստաթղթերին համապատասխանությունը: Արգելել կամ փոփոխել այն նյութերը, որոնք չեն համապատասխանում անհրաժեշտ պայմաններին, • վերահսկել և գնահատել շինաշխատանքների գործընթացը, որպեսզի ապահովվի շինաշխատանքների ավարտը՝ համաձայն պայմանագրի մեջ նշված ժամանակացույցի, • ստուգել բոլոր այն փորձարկումների արդյունքները , որոնք անհրաժեշտ են որակի ապահովման համար: Ստուգել բոլոր հաշվարկները, որոնք անհրաժեշտ են համապատասխան վճարումները իրականացնելու համար, • ստուգել բոլոր ծավալային չափերը և հաշվարկները, որոնք անհրաժեշտ են վճարման համար, • կատարել որակի և քանակի հսկումը, այն աշխատանքների անհրաժեշտ փորձարկումները, որոնք կատարվում են կապալի պայմանագրի իրականացման շրջանակում, • գտնել շինարարության ժամանակ առաջացող խնդիրները և առաջարկել այն գործողությունները, որոնք անհրաժեշտ կլինեն աշխատանքները արագացնելու և աշխատանքային ժամանակացույցը պահպանելու համար, • հսկել բոլոր այն հարցերը, որոնք կապված են շինաշխատանքներն անվտանգ իրականացնելու հետ և հրահանգել Կապալառուին տեղադրել նշաններ, լուսավորության անվտանգության սարքերի և այլ համապատասխան միջոցառումների իրականացման համար, • կատարել անհրաժեշտ գրառումներ, որոնք անհրաժեշտ են պայմանագրի ընթացքի վերահսկման համար (ընդգրկելով կատարված աշխատանքների հավաստագրերը և այլ	դրամ	24800	1	**Արաբկիր վարչական շրջան** Մամիկոնյանց 26ա, Մամիկոնյանց 40/1, Մամիկոնյանց 36/2, Մամիկոնյանց 23/1, Տիգրանյան 19/1, Զարյան 3, Վրացական 4-րդ նրբանցք 7, Վրացական 4-րդ նրբանցք 5, Կիևյան 4/2, Կիևյան 4/4, Այգեձոր 72, Կոմիտաս 7/2, Կոմիտաս 7/3, Խաչատրյան 26/3, Խաչատրյան 27, Զարյան 15ա, Արաբկիր 51 փող. 3, Բաղրամյան 66, Կոմիտաս 14, Հ. Էմին 6, Գյուլբենկյան 2/1, Սոսե 2, Սոսե 4, Սոսե 6, Սունդուկյան 15/4, Արծրունի 90, Արծրունի 88 /ընդամենը 27 շենք /	
4	71351540/646		դրամ	34900	1	<u>Դավթաշեն 1- ին թաղամաս</u> - 48 շենք, 36, 53, 54բն, 11 շենք, 54բն /1 վ. տ/, 47 շենք, 35բն, 24 շենք, 17բն /1մ. վ.տ/, 26 շենք, /2.3մ. վ.տ/, 29շենք /3, 4 մ. վ. տ/, 31 շենք/վ.տ/, 32 շենք /1մ. վ.տ/, 33 շենք /3մ. վ.տ/, 6 շենք/1,3մ. շ.տ/, 7 շենք/1,2,3մ. շ.տ/, 4 շենք/1,2,3մ. շ.տ/, 5 շենք/1,2,3մ. շ.տ/, 35 շենք/վ.տ/, 61 մանկապատեզ, 58 մանկապատեզ, 13շենք/1, 2, 3մ վ.տ/, 14շենք/1, 2 մ վ.տ/, 15շենք/1, 2, 3 մ վ.տ/, 16շենք/վ.տ/, 17շենք/1, 2, 3մ վ.տ/, 18շենք/1, 2մ վ.տ/, 19շենք/1, 2մ վ.տ/, 37շենք 59բն./վ.տ/, 38շենք /վ.տ/, 39շենք /վ.տ/, 40շենք /վ.տ/1, 41շենք /վ.տ/, 51շենք 17բն, 42շենք /վ.տ/, 43շենք /վ.տ/, 44շենք	

		անհրաժեշտ փաստաթղթեր), • ստուգել և անհրաժեշտության դեպքում կատարել փոփոխություններ Կապալառուի կողմից նախապատրաստված բանվորական նախագծերի մեջ, • կատարել աշխատանքների ծավալների չափագրումներ և մասնակցել կատարողական փաստաթղթերի կազմմանը և հաստատմանը, • շինարարության ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին ներկայացնել Հաշվետվություն կատարված աշխատանքների վերաբերյալ՝ կցելով լուսանկարները, անհրաժեշտ գծագրերը, ծածկված աշխատանքների ակտերը, փորձարկման ակտերը, սերտիֆիկատները: • **Շինարարության ողջ ընթացքում ապահովել տեխ. հսկիչի մշտական ներկայությունը օբյեկտներում**				/վ.տ/, 47շենք /վ.տ/ **<u>Դավթաշեն 2-րդ թաղամաս</u>** - 17շ. Թիթեղյա ծածկի փոխում b=0,55մմ, 9շ. 18բն. /3մ վ.տ/, 6շ. Թիթեղյա ծածկի փոխում, 8շ. Թիթեղյա ծածկի վերամորոգում և ներկում, 7շ. 17, 18, 35, 36, 53, 54, 71բն., 30շ. /1, 2մ ՎՏ/, 33շ. /1, 2մ ՎՏ/, 34շ. /1, 2, 3, 4մ ՎՏ/, /3,4 շ. տ/, 10շ. /3 ՎՏ/, 14շ. /2, 3 ՎՏ/, 22շ. /2, 3 ՎՏ/, 4Աշ. /1 ՎՏ/, 35շ. /1, 2մ ՎՏ/, /1, 2 շ.տ/, 37շ. /1, 2մ ՎՏ/, /1, 2 շ.տ/, 37Աշ. /1, 2մ ՎՏ/, /1, 2 շ.տ/, 38շ. /1, 2մ ՎՏ/, /1, 2 շ.տ/, 39շ. /1, 2, 3, 4մ ՎՏ/, /1, 3 շ.տ/, 36շ. /ՎՏ/, 43շ. /2,3մ ՎՏ/, 42շ. /1, 2մ ՎՏ/, 44շ. /ՎՏ/, 59 մանկապարտեզ **<u>Դավթաշեն 3-րդ թաղամաս</u>** - 23շ. 36բն. /1մ վ.տ/, 13շ. 35,36,72բն., 7շ. 35,36բն. /1, 2, 3մ վ.տ/, 16շ./1, 2մ վ.տ/, /1,2 շ. տ/, 12շ. 17, 53, 72բն. /1, 2, 3, 4մ վ.տ/, 20շ. Թիթեղյա ծածկի փոխում, 17շ. Թիթեղյա ծածկի վերանորոգում և ներկում, 14շ. /1, 4մ վ.տ/, 15շ. /1,2մ վ.տ/, 10շ. 54բն. /1,2, 3, 4մ վ.տ/, 8շ. 36բն. /1,2, 3մ վ.տ/, 9շ. 34բն. /վ.տ/,18շ. /3, 4վ.տ/, /4շ.տ/, 21շ. /2, 3, 4վ.տ/, /4շ.տ/, 23շ. /1, 2մ վ.տ/, /2շ.տ/, 24շ. Թիթեղյա ծածկի վերանորոգում և ներկում, 60 մանկապարտեզ **<u>Դավթաշեն 4-րդ թաղամաս</u>**- 48շենք 36բն, 41շենք 53բն, 3շենք /2, 3 շ.տ/, 10շենք /1, 2, 3 շ.տ/, 11շենք /1, 2, 3, 4, 5 շ.տ/, 13շենք թիթեղյա ծածկի վերանորոգում և ներկում, 2Աշենք 71բն /վ. տ/, 4Աշենք 72բն /4մ վ. տ/, 17շենք /1, 2մ վ. տ/, /1, 2 շ.տ/, 23շենք /1, 2, 3, 4մ վ. տ/,/ 2 շ.տ/, 27շենք /2, 3, 4մ վ. տ/, 28շենք /1, 2, 3, 4մ վ. տ/, /3 շ.տ/, 31շենք /1, 2, 3մ վ. տ/, 37շենք /1, 2, 3մ վ. տ/, 22շենք	

						53, 54բն, 26շենք թիթեղյա ծածկի փոխում, 62 մանկապարտեզ. 33շենք /2, 3, 5մ վ.տ/, 39շենք 18, 54բն /2, 3մ վ.տ/, 44շենք /2մ վ.տ/	
5	71351540/600		դրամ	26800	1	**Կենտրոն վարչական շրջան** Ամիրյան 20, Բաղրամյան 1-ին փակ. 14, Բրյուսովի 165, Դեմիրճյան 17ա, Սարյան 4, Սարյան 38, Սարյան 36, Մաշտոցի 15, Ամիրյան 18, Ամիրյան 18ա, Սարյան 35, Սարյան 27, Սարյան 29, Սարյան 31, Սարյան 33, Կողբացի 1, Կողբացի 1ա, Կողբացի 2, Կողբացի 2ա, Կողբացի 3, Կողբացի 3ա, Այգեստան 9/65, Քաջազնունու 6, Եր. Քոչար 3, Եր. Քոչար 13, Քաջազնունու 9, Վարդանանց 28, Քաջազնունու 2, Վարդանանց 32, Ս. Վրացյան 71, Ս. Վրացյան 71/1, Քաջազնունու 8/1, Քաջազնունու 14 , Պուշկինի 3, Այգեստան 10/ 2/	
6	71351540/633		դրամ	14800	1	**Մալաթիա- Սեբաստիա վարչական շրջան** Բաբաջանյան 30շ, Բաբայանյան 4շ , Բաբաջանյան 6շ, Անդրանիկի 67շ, Անդրանիկի 65շ, Իսակովի 50/4 շ, Իսակովի 50/7 շ , Անդրանիկի 21 շ, Օգանովի 40 շ, Բաբաջանյան 117, Բաբաջանյան 143, Բ-2 93, Բ2 95, Բ-2 89, Բ-2 85, Անդրանիկի 110շ.բն 50,52, Անդրանիկի 142շ.բն26,	

						Անդրանիկի 109$_2$. Բն.53,55, Անդրանիկի 144$_2$.բն.27, Անդրամիկի 88$_2$ բն 36, Անդրանիկի 111$_2$. Բն. 54, Անդրանիկի 115$_2$. Բն.55, Անդրանիկի 158$_2$., Բաբաջանյան 83$_2$., Բաբաջանյան 55/1$_2$, Բաբաջանյան 75$_2$., Բաբաջանյան 67$_2$., Ռաֆֆու 29/1$_2$.բն.30, Ռաֆֆու 79$_2$.բն.18, Ռաֆֆու 61$_2$.բն.18, Ռաֆֆու 85$_2$. Բն.54, Ռաֆֆու 77. Բն.31, Ռաֆֆու 52$_2$. Բն.54, Իսակովի 36/2$_2$., Իսակովի 36/4$_2$., Իսակովի 44$_2$., Իսակովի 42$_2$., Բ-2 136$_2$., Բ-2 21$_2$., Բ-2 133$_2$., Բ-2 129$_2$., Բ-2 138$_2$., Անդրանիկի 145$_2$., Ճառագայթ. "Բ", Բաբաջանյան 93$_2$., Անդրանիկի 90$_2$.2-մուտք, Անդրանիկի 84$_2$.2-մուտք, Ռաֆֆու 39$_2$. 2-մ., Օհանովի 10, Օհանովի 14, Շերամի 79, Շերամի 95, Շերամի 101, Անդրանիկի 42, Շերամի 115, Սվաճյան 56, Անդրանիկի 50, Անդրանիկի 22, Սեբաստիա 141/1$_2$ 39 բն, Միքաելյան 3$_2$ 156բն, Միքաելյան 3$_2$ 130բն, Մանուկյան 4$_2$ 43 բն, Ռ.մելիքյան 2/2 34բն40, Միքաելյան 74$_2$ 44,45բն, Ռաֆֆու 25$_2$ 17,18բն, Անդրանիկի 89$_2$18բն, Անդրանիկի 93$_2$43,44բն, Ծերենցի 5$_2$ 89 բն, Կուրղինյան 21$_2$, Շրջանային 2/5, Կուրղինյան նրբ 11$_2$ բազմաբնակարան շենքեր/	

7	71351540/614		դրամ	29000	1	**Էրեբունի վարչական շրջան** Խ. Դոնի փող. հ. 5 շենք, Խ. Դոնի փող. հ. 1 շենք, Խ. Դոնի փող. հ. 23 շենք, Խ. Դոնի փող. հ. 31 շենք, Խ. Դոնի փող. հ. 19 շենք, Խ. Դոնի փող. հ. 27 շենք, Խ. Դոնի փող. հ. 1/1 շենք, Խ. Դոնի փող. հ. 1/2 շենք, Խ. Դոնի փող. հ. 12 շենք, Խ. Դոնի փող. հ. 8 շենք, Ավանեսովի փող. հ. 18 շենք, Ավանեսովի փող. հ. 22 շենք, Ավանեսովի փող. հ. 26 շենք, Նոր Արեշ 35 փող. հ. 125/3 շենք, Գլինկայի փող. հ. 6 շենք, Ս. Դավթի փող. հ. 13 շենք, Արցախի պող. հ. 8 շենք, Աթոյան անց. հ. 10 շենք, Աթոյան անց. հ. 20 շենք, Աթոյան անց. հ. 12/3 շենք, Էրեբունի փող. հ. 1 շենք, Էրեբունի փող. հ. 21 շենք, Ազատամարտիկների փող. 78/2 շենք, Արցախի պող. հ. 22/1 շենք, Արցախի պող. հ. 22/2 շենք, Նոր Արեշ 35 փող. 127/2 շենք բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների նորոգման /	
8	71351540/631		դրամ	19800	1	**Շենգավիթ վարչական շրջան** Ֆրունզե 6/3, Ֆրունզե 6/4, Ֆրունզե 6/5, Ֆրունզե 16, Արշակունյաց 50/1, Գ.Նժդեհ 34/1, Շիրակի 56/1, Մարկվարտի 85/1, Շ. Շահամիրյան 1, Շ. Շահամիրյան 3, Շիրակի 6ա, Արտաշիսյան 88, Մայիսի 9 51, Արագածի 26, Մանանդյան 1/3, Շևչենկո 10, Չեխովի 54, Չեխովի 50, Չեխովի 52, Արտաշիսյան 50, Արտաշիսյան	

						50/1, Արտաշիսյան 59, Արտաշիսյան 61, Արտաշիսյան 63, Արտաշիսյան 63/2, Շևչենկո 4, Չեխովի 31, Ս. Տարոնցի 1/1, Ս. Տարոնցի 7/1, Ս. Տարոնցի 7/3, Վ. Շենգավիթ 2փ 3, Վ. Շենգավիթ 2փ 7, Վ. Շենգավիթ 2փ 20/3, Ն. Շենգավիթ 9փ 1/1, Ն. Շենգավիթ 9փ1/2, , Ն. Շենգավիթ 11փ 39/1, Ն. Շենգավիթ , 11փ 37/3, Աէրացիա 2/10, Գ. Նժդեհի 27/1, Գ. Նժդեհի 27/2 , Ն. Շենգավիթ 11փ 37, Չեխովի 35, Չեխովի 29, Շևչենկո 1, Չեխովի 1, Չեխովի 8, Չեխովի 10, Չեխովի 8/1, Չեխովի 10/1, Մանանդյան 1/2, Մայիսի 9 51/1, Արտաշիսյան 88ա, Շիրակի 7ա, Ֆրունզե 12, Արշակունյաց 48/1, Արշակունյաց 50/1, Արշակունյաց 52/1, Արշակունյաց 54/1, Արշակունյաց 65, Բագրատունյաց 22/2, Շարուրի 28. բազմաբնակարան շենքեր/	

10	71351540/651		դրամ	14800	1	**Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան** Ռուբինյանց փող. 2/2, Զ.Սարկավագի փող. 106/1, Լեփսիուսի փող.18, Հասրաթյան փող. 5/2, Ռուբինյանց փող. 17/2, Թբիլիսյան խճ. 2, Ուլնեցու 3-րդ փակ. 6, Տիգրանյան 3, Զ. Սարկավագի 126/1, Դրոյի 8/2, Ուլնեցի 74, Լեփսուսի 14, Դ. Անհաղթի 14 բազմաբնակարան շենքեր/	

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտի փող. 1
Կենտրոնական գանձապետարան

ՀՎՀՀ 02593108

Գ. Չթրյան _____
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
Վահրամ Կնյազյան Ա/Ձ
ՀՀ Շիրակի մարզ, ք. Արթիկ,
Բաղրամյան փող., 1 շ., բն. 2
«ՎՏԲ Հայաստան Բանկ» ՓԲԸ, 10 մ/ճ
Հ/Հ 16067009230500
ՀՎՀՀ 61718934

Վ. Կնյազյան _____
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 2
16 մարտի 2018թ.կնքված N ԵՔ-ԲՄԾՁԲ-18/53-2
ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Ստացողի բանկը և հաշվեհամարը	Ֆինանսավորման գումարը Երևան քաղաքի 2018 թվականի բյուջեով նախատեսված միջոցներից ըստ ամիսների՝ ընդ որում												ԸՆԴԱՄԵՆԸ ՏԱՐԵԿԱՆ
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
2	Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ	Կենտրոնական գանձապետարան Հ/Հ 900052473403				29000	29000	29000	29000	29000	29000	29000	29000	29000	**29000**
3	Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ	Կենտրոնական գանձապետարան Հ/Հ 900032313158				24800	24800	24800	24800	24800	24800	24800	24800	24800	**24800**
4	Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ	Կենտրոնական գանձապետարան Հ/Հ 900052476323			34900	34900	34900	34900	34900	34900	34900	34900	34900	34900	**34900**
5	Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ	Կենտրոնական գանձապետարան Հ/Հ 900012213915			26800	26800	26800	26800	26800	26800	26800	26800	26800	26800	**26800**
6	Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ	Կենտրոնական գանձապետարան Հ/Հ 900052470490			14800	14800	14800	14800	14800	14800	14800	14800	14800	14800	**14800**

7	Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ	Կենտրոնական գանձապետարան Հ/Հ 900022600630			29000	29000	29000	29000	29000	29000	29000	29000	29000	29000	**29000**
8	Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ	Կենտրոնական գանձապետարան Հ/Հ 900022750484										19800	19800	19800	**19800**
10	Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ	Կենտրոնական գանձապետարան Հ/Հ 900032542129			14800	14800	14800	14800	14800	14800	14800	14800	14800	14800	**14800**
	Ընդամենը														**193900**

Վճարման ժամանակացույցում գումարները ներկայացված են աճողական կարգով

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտի փող. 1
Կենտրոնական գանձապետարան

ՀՎՀՀ 02593108

Գ. Չթրյան ----------
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
Վահրամ Կնյազյան Ա/Ձ
ՀՀ Շիրակի մարզ, ք. Արթիկ,
Բաղրամյան փող., 1 շ., բն. 2
«ՎՏԲ Հայաստան Բանկ» ՓԲԸ, 10 մ/ճ
Հ/Հ 16067009230500
ՀՎՀՀ 61718934

Վ. Կնյազյան ----------
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 3
« » 2018 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2018 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 2018 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 2018 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված 9
«ԵՔ-ԲՄԾՁԲ-18/53» ծածկագրով
բաց մրցույթի հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան

14 մարտի 2018թ.

Վահրամ Կնյազյան Ա/Ձ-ն ի դեմս Վահրամ Կնյազյանի <<Անձնագիր AH 0667352, տրված՝ 12.09.2008թ., 028-ի կողմից>>, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է Երևանի քաղաքապետարան (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ ԵՔ-ԲՄԾՁԲ-18/53 ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն << կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.3 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.4 Բանկը պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.5 Պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.6 Սույն համաձայնագիրը և կից պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և վավեր է Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ :

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

Վահրամ Կնյազյան Ա/Ձ
ՀՀ Շիրակի մարզ, ք. Արթիկ,
Բաղրամյան փող., 1 շ., բն. 2
«ՎՏԲ Հայաստան Բանկ» ՓԲԸ, 10 մ/ճ
Հ/Հ 16067009230500
ՀՎՀՀ 61718934

Վ. Կնյազյան ----------
(ստորագրություն)

Կ.Տ.

VAHRAM KNYAZYAN
ВАГРАМ КНЯЗЯН
61718934

1.

ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ[1] N

(պայմանագրի կատարման ապահովում)

2. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

3. Ընկերություն (այսուհետ՝ վճարող)՝ Վահրամ Կնյազյան Ա/Ձ

4. Վճարողի բանկը՝ «ՎՏԲ Հայաստան Բանկ» ՓԲԸ, 10 մ/ճ

5. Վճարողի հաշվի համարը՝ Հ/Հ 16067009230500

6. Վճարողի ՀՎՀՀ՝ 61718934

7. Վճարողի ՀԾՀ՝

8. Շահառու՝ Երևանի քաղաքապետարան

9. Շահառուի ՀՎՀՀ՝ 02593108

10. Շահառուի բանկը՝ Կենտրոնական գանձապետարան

11. Շահառուի հաշվի համարը /հշ.N/ 900015211429

12. Գումարը թվերով և բառերով՝ 19390 (Տասնինը հազար երեք հարյուր իննսուն) ՀՀ դրամ

13. Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ AMD

14. Գործարքի /վճարման/ նպատակը՝ Պայմանագրի կատարման ապահովում

15. Պայմանագրի ծածկագիրը՝ ԵՔ-ԲՄԾՁԲ-18/53-2

16.Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը

17. կից՝--- էջ

19.ա. Շահառուի ստորագրությունները՝ /_____/ /_____/ 19.բ. Կ.S.	18.ա. Վճարողի ստորագրությունները՝ /_____/ /_____/ 18.բ. Կ.S.
Կատարված է շահառուի բանկի կողմից 20.ա. /_____/ /ստորագրություն/ 20.բ. Կ.S. "___" ___ 20___ թ.	Կատարված է վճարողի բանկի կողմից 21.ա. /_____/ /ստորագրություն/ 21.բ. Կ.S. 22.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

[1] *Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*